

<b>Համարը N 410</b> <b>Տիպը</b> Որոշում <b>Սկզբնաղբյուրը</b> ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել <b>Ընդունող մարմինը</b> ԼՂՀ կառավարություն <b>Ստորագրող մարմինը</b> ԼՂՀ Վարչապետ <b>Վավերացնող մարմինը</b> <b>Ուժի մեջ մտնելու ամսաթիվը</b> 16.11.2004	<b>Տեսակը</b> Մայր <b>Կարգավիճակը</b> Գործում է <b>Ընդունման վայրը</b> Ստեփանակերտ <b>Ընդունման ամսաթիվը</b> 16.11.2004 <b>Ստորագրման ամսաթիվը</b> 16.11.2004 <b>Վավերացման ամսաթիվը</b> <b>Ուժը կորցնելու ամսաթիվը</b>
--	---

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՁԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 410

ք.Ստեփանակերտ

#### ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 48-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո թ ո շ ու մ է.**

Հաստատել **անձի սեփականություն** հանդիսացող հողամասում գրունտային ջրերի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐՉԱՊԵՏ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված  
ԼՂՀ կառավարության  
2004թ. նոյեմբերի 16-ի  
թիվ 410 որոշման

#### Կ Ա Ր Գ

#### ԱՆՁԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է **անձի սեփականություն** հանդիսացող հողամասում գրունտային ջրերի (երկրագնդի վերին կեղևաշերտի ազատ ջրափոխանակության գոտում տեղակայված և ջրագրական ցանցով ցամաքորդվող ջրային ռեսուրսներ) օգտագործման գործընթացը:

2. **Անձի սեփականություն** հանդիսացող հողամասում ձևավորվող գրունտային ջրերը տվյալ **անձի** կողմից օգտագործվում են՝ դրա մասին տեղեկացնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝ Նշելով ջրօգտագործողի անունը, ազգանունը, ջրօգտագործման նպատակը, ծավալը և ջրառի վայրը:

3. **Անձի սեփականություն** հանդիսացող հողամասում առկա գրունտային ջրերը տվյալ **անձի** կողմից խմելու և ռեկրեացիոն նպատակներով կարող են օգտագործվել միայն ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթղթին և ձևերին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվությամբ:

4. **Անձի սեփականություն** հանդիսացող հողամասում առկա գրունտային ջրերն օգտագործման նպատակով այլ **անձի** տրամադրվում են միայն ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթղթին և ձևերին համապատասխան տրամադրված ջրօգտագործման թույլտվությամբ:

5. Ջրօգտագործողը սույն կարգը խախտելու դեպքում ջրային ռեսուրսների տարածքային կառավարման մարմնի կողմից գրավոր զգուշացվում է: Չզուլացվելուց հետո սույն կարգը կրկին խախտելու դեպքում ջրօգտագործողը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ենթարկվում է պատասխանատվության:

ԼՂՀ կառավարության աշխատակա  
զմի

Ղեկավար-Նախարար

Ս. Գրիգորյան